

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
ACADEMIA ARMENA SANCTI LAZARI



Խմբագրությունն իրաքանչիւր յօդուածի հեղինակին կը բողոք արտայայտուած գիտական կարծիքներու պատասխանատուութիւնը, գնահատելով հանդերձ հետազոտական մակարդակի վրայ իրաքանչիւրին ներքին արժէքը:

La Rédaction laisse aux différents auteurs la responsabilité des opinions exprimées dans leurs articles, sans vouloir préjuger de la valeur intrinsèque de ces derniers au niveau de la recherche.

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» նպաստով
Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»

20-83

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ – ARTICLE DE FOND

ՄՇԱԿՈՅԹ՝ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՒ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Մարդու բազմադարեան յեղաշրջումին մէջ կը հանդիպինք երբեմն տուեալներու կամ տարածքներու, որոնք համեմատաբար շատ ուշ գտած են գաղափարային ինքնութիւն եւ իմաստաբանական արտայայտութիւն մը, բէպէտեւ կը պատկանին մարդուն լինելական բախտախնդրութեան տարերային ու կենսական կառոյցներու կարգին: Այսպիսի երեւոյթ մը կը կազմեն նաեւ այն ամէն ինչ՝ զոր ժամանակակից մարդուն խօսուածքը կը ներփակէ առ հասարակ «մշակոյթ» իմացումին ներքեւ, իր բազմակողմանի ու բազմաձայն ընկալումներով: Մեր լեզուին մէջ՝ «ոյթ» վերջածանցը արդէն իսկայն կը մատնէ «մշակոյթ» բառին նորաբանական հանգամանքը: Իսկ դասական լատիներէնին եթէ ծանօթ է «cultura» եզրը, ասիկա տակաւին չէ գերազանցած իր ստուգաբանական նշանականութիւնը «մշակում»ի՝ գլխաւորապէս նիւթական եւ ապա փոխաբերական առումով: «Cultura» բառին իմաստաբանական առաջին յեղաշրջումները դէպի ներիմացական այն բովանդակութիւնները, զոր բառը ստացած է հետզհետէ արդի ժամանակներու ընթացքին, երեւան կու գան վերածնունդի դարուն, եւ վերջնականօրէն կը հաստատուին իբրեւ լեզուի իմաստնային հակում՝ գերմանական Լուսաւորութեան շրջանին, «Kultur»ի կէօքէյեան եւ Հումպոլթեան համապարփակ իմացումներով: Ռումանթիզմով զրեքէ կը նուիրագործուի «մշակոյթ»ի պատմական-ազգագրական տարածքը, մինչ այնուհետեւ իրաքանչիւր յաջորդող փիլիսոփայական տեսութիւններու եւ ընկերային գաղափարախօսութիւններու խախտարդէտ խնամկարին ընդմէջէն՝ ամենագան մերձեցումներով կը նոյնացայ «մշակոյթ» կոչուող երեւոյթին եւ իմացումին տեսական ու փորձառական ուսումնասիրութիւնը: Մեր նպատակը չէ այստեղ խորասուզուիլ մեզնի հետազոտութեան մը մէջ: Պարզապէս կ'ուզենք կանգ առնել տրամաւսական յարաբերութեան մը վրայ որ, մեր կարծիքով, առարկայապէս կը տիրէ եւ պէտք է գիտակցօրէն տիրէ մշակոյթի մը կառուցման յեղաշրջումի փուլերուն եւ այդ միեւնոյն մշակոյթին խաբիսը կազմող ենթախորքին միջեւ:

Այս խորհրդածութիւններուն մեզ մղող առիթ հանդիսացան թէեւ երկու գիտածողմներ՝ որոնք կը հայեին, մին՝ ամբողջապէս, միւսը՝ առանկապէս, անցեալի հայ մշակոյթին, եւ որոնց մասին ընթերցողը պիտի գտնէ երկու գեկոյց «Բագմավէպ»ի ներկայ թիւին մէջ, սակայն առաջարկուած հարցադրութիւնը լայնօրէն կը գերազանցէ պատահական խղիւղութիւններու ծիրը՝ դաշելու համար «այժմեական», ինչպէս եւ «ազգային» մշակոյթի հարազատ իմացութեան մը կենսական ջիղերուն:

Վերածնունդի, բայց մանաւանդ Լուսաւորութեան շարժումներուն գլխաւոր յատկանիշերէն էր՝ անոնց առաջնորդ միտքերուն տեւիչը խզելու անցեալին հետ կապերը: Եթէ Վերածնունդը շատ աւելի զուսպ էր այս տեսակէտէն, քանի որ իր հետաւորութիւնը կը սահմանէր սոսկ Միջին դարերուն նկատմամբ եւ, ընդհանրապէս, գիտակից ու խորունկ ներշնչումով մը կ'ուզէր կապուիլ յունահռոմէական դասական մշակոյթին, Լուսաւորութիւնը, սակայն, կը մտադրէր ամբողջական ձեռքագատում մը ըլլալ անցեալէն, բոլորովին անկախ, սոսկ դէպի ապագան նետուած: Այս ուղղութեամբ շատ յատկանշական են Փիէռ Պայիի սա խօսքերը. «Կ'ապրինք այնպիսի դարաշրջանի մը մէջ՝ որու բաղդատմամբ կը խաւարին բոլոր նախընթաց դարերը»: Եթէ ուսման թիւով ուժեղ հակադրեցութիւն մը նշեց, գէթ իր բազմաթիւ դրսեւորումներուն մէջ, նման չափազանց «նախփ» ըմբռնումներու դէմ, ասով հանդերձ այդ միեւնոյն «պատկերամարտ» միտումները (իմացի՛ր իրքեւ հակադրեցութիւն հաստատուած աւանդութեան մը) իրենց կնիքը կը դրոշմէին դրապաշտութենէն մինչեւ ապագայապաշտութիւն՝ ԺԹ. դարու երկայնքին ու մեր դարու առաջին տասնամեակներուն վրայ տարածուող այլեւայլ եւ այլազան մտաւորական եւ ընկերաքաղաքական շարժումներուն վրայ: Իտալիոյ մէջ՝ հին Միլանի գարդը կազմով՝ քաղաքին ներքին ջրանցքներուն ցամաքեցումը ի սէր մարտարարութեան ստանկան արդիականացումի, ապագայապաշտներու կոչը՝ Վենետիկը վերածելու գործարանային համալիրի մը, կարգ մը սովետ յեղափոխականներու փափաքը՝ մինչեւ իսկ Պալշոյը քանդելու իրքեւ յետին մնացորդը քաղաքին հակադրեցութեան քաղաքականութեան, քանի մը նմոյշներ են լոկ՝ «արդիապաշտ» մտայնութիւնը ներկայացնող առաջադրեցութիւն եւ նախաձեռնութիւններու այն հսկայ փառանգէն, որոնցմէ ոմանք եթէ վրիպած են գործադրութենէ իրենց ազդակող անհեթեթութեան պատճառով, մեծամասնութիւնը սակայն յանգած է արդիւնքի՝ գլխաւորապէս մեր դարուն առաջին կէսի ընթացքին:

Հիմնական վերատեսութեան մը ենթադրուած են այս մտածելակերպերը՝ մօտաւորապէս վերջին չորս տասնամեակներուն: Սոյն յեղաշրջումը պայմանաւորող ինչ ինչ «արմատական» ազդակներու կողմէն

փին — օրինակ՝ գոյգ աշխարհամարտերու փորձը — կարեւոր դեր մը խաղացած է նաեւ որոշ հասարակական գիտութիւններու հսկայափայլ զարգացումը, ինչպէս մարդաբանութիւն, ազգագրութիւն, ազգագիտութիւն (ethnologie), ընկերաբանութիւն, հնէաբանութիւն, տեսական լեզուաբանութիւն, հաւաքական հոգեբանութիւն, արուեստի պատմութիւն եւ նոյնիմֆն ընդհանուր պատմագիտութիւնը, եւլն. որով հետզհետէ աւելի գիտակցուած է՝ դարերու եւ սերունդներու միջեւ տիրող կապերուն, պայմանաւորումներուն, ներփակումներուն, հետզհետէ փուլ եկած են ամառմատ զարգացումի, բացարձակ նորարարութեան, անպայմանաւոր ուսումնական, ամենթեւեթ յառաջդիմութեան արմատացած առասպելները (mythe): Հետզհետէ աւելի բացառող տեսութիւն մը ձեւացած է մարդուն յեղաշրջումին եւ յատկապէս մշակոյթներու յեղաշրջումին այն հիմնական սղամասութեան նկատմամբ՝ զոր կարելի է բանաձեւել իբրեւ «վերակառուցում եւ փոխակերպում»: Ըստ այսմ, մարդուն ներաշխարհեան սղսրագործութեան, «մարդկային քաղաքին» կառուցման իւրաքանչիւր պահը կը բնորոշուի կրկնակի տարածքով մը, այն է վերակառուցումի՝ որով ամէն մէկ նոր քաղաքային կառուցումը շաղախ մը կը կրէ իր մէջ, եւ փոխակերպումի՝ որով նախընթացը երբեք չի կրկնուիր այնպէս ինչպէս անգամ մը յայտնուած է: Եթէ այսպիսի է պատմութեան օրէնքը, ուրեմն տրամագծօրէն հակադիր եզրեր չեն իրարու «այժմեականութիւն» եւ «աւանդութիւն», «զարգացում» եւ «պահպանում». ընդհանրապէս՝ ուղիղ ըմբռնուած աւանդը կրնայ խթան հանդիսանալ նորին, ինչպէս «սնոպ»ի չվերածուած նորը՝ իր կարգին՝ իւրայատուկ վերաբոժեաւորում մը կ'ընծայէ աւանդին: Եւ ըստուգիւ, այս փոխադրեցութիւնը, նոյնիսկ ի հետնկա երեւութապէս բոլորական խզումներու, կը նշուի՝ ամէն անգամ՝ ուր կայ վաւեր նորութիւն եւ իրաւ աւանդ մը: Վերադարձաւոր համար խզումի վերոյիշեալ ամէնէն տիպային պատմական օրինակներէն մէկուն, նորագոյն հետազոտութիւններ երեւան կը բերեն՝ թէ ինչպէս վերածնունդը կ'ընդունարուի արդէն Միջին դարու որոշ կանխարար երեւոյթներուն մէջ, հակառակ երկու շրջաններուն միջեւ իսկական խոր և բազմապիսի տարբերութիւններու, և առեւտրային ամբողջական խզումի մը: Աւելորդ, մանաւանդ թէ որոշ չափով տեսա դիրքորոշում մը կը դառնայ, հետեւաբար, ի խնդիր նորին՝ անգիտանալ հինը, քանի որ պատմական աւելի խոր, որով եւ աւելի հասուն գիտակցութիւն մը ցոյց կու տայ նման կեցութեան մը «ենթակայական» համագամմը:

Այս խորհրդածութիւնները կ'ընձեռեն նաեւ բանալին՝ ուրուագրելու համար լուծումի ընդհանուր ուղղութիւն մը «ազգային» մշակոյթի վաւեր իմացումի մը համար: Արդարեւ «ազգային մշակոյթ»ի

գաղափարին յարուցած հիմնական հարցը կը վերածուի, հուսկ, մշակութային տուեալ ծիրի մը մէջ՝ անցեալին ու ներկային տրամադրականութեան հարցին: Այն իմաստով որ, եթէ «ազգային» կը նկատենք տուեալ աւանդ մը, ներկան՝ պահպանելու համար այդ միեւնոյն ազգային դիմագիծը՝ պէ՛տք է անպայման վերակրկնէ անցեալը: Հա՛րկ է մերժուած նկատել «ազգայնութեան» գաղափարէն ինչ որ «նոր» է, ըլլա՛յ թէ յայտնուի իբր ներարկում կամ իւրացում կամ կատարում կամ յղացք:

Անշուշտ դժուար չէ նշմարել, թէ այսօրինակ հարցումի տըրուելիք դրական պատասխան մը՝ «թանգարանային»ի հումանիշ պիտի դարձնէ «ազգային»ի գաղափարը, անմար ամուրթեան մը դատարար-նիւր կնիքով անոր վրայ: Նոյնքան դիւրին չէ, սակայն, ֆոզգերծել եւ դիմորոշել այն առարկայական պատճառները, որոնք կը բնադրեն՝ «նոր» իբրեւ տրամադրական մէկ պահը նկատել «ազգային»ին:

Տեսութիւն մը ահա՝ որ իր արդարացի հիմնադրումը կը գտնէ մշակութային յեղաշրջումի տրամադրականութեան այն ընդհանուր օրէնքին մէջ՝ զոր բանաձեւեցինք իբրեւ «վերակառուցում եւ փոխակերպում»:

Բնականաբար, չենք կրնար այստեղ աւելի մանրամասն վերլուծումներու մէջ իջնել՝ «ազգային»ի եւ «նոր»ի տրամադրականութեան այս ընդհանուր օրէնքին, մանաւանդ անոր գործնական կիրարկումներուն եւ յարմարեցումներուն նկատմամբ. ո՛չ միայն տեղի սղութեան պատճառով, այլ նաեւ անոր համար՝ որ այդ կիրարկումներն ու յարմարեցումները կը պահանջեն, բացի մարդաբանական-իմաստասիրական բնոյթի ընդհանուր տեսութիւններէն, մանրագին և առանձնայատուկ հետազոտութիւն մը՝ իւրաքանչիւր համապատասխան մարզի մէջ, ըլլա՛յ տարբեր արուեստ, լեզու, ֆազաֆաշիւնութիւն, «փոփոխութիւն», բարձր, եւլն.: Կարելի է, սակայն, բանաձեւել արդէն ընդհանուր սկզբունք մը՝ նաեւ այս մասնակի մարզերուն նկատմամբ, յարաբերելով անոնց իւրաքանչիւրին յատուկ խնդրադրութիւնը՝ «վերակառուցումի եւ փոխակերպումի» տրամադրականութեան հիմնական օրինաչափին: Սկզբունք մը՝ որ արտայայտութիւն կը գտնէ վերջին տարիներուն ա՛յնքան ծաւալած եւ ա՛յնքան աշխատանքներով այն երեւոյթին մէջ, զոր մերօրեայ ընկերայնութիւնը «արմատներու որոնում» կ'անուանէ: Այո՛, անհրաժեշտութիւնը, ստիպողականութիւնը արմատներու որոնումին՝ կը խորհիմք թէ պէ՛տք է նկատուի իբրեւ հիմնական սկզբունքներէն մէկը՝ ըլլա՛յ մեքոտարանական, ըլլա՛յ բովանդակային գետնի վրայ, ազգայինի եւ նորի տրամադրականութեան համընկնող (adéquat) մերձեցումի մը համար:

Արմատներու որոնումի այս ընդարձակ, գրեթէ համապարփակ ծրագրային ուղեգիծին մէջ կը գտնուին, ի միջի այլոց, իբրեւ ու-

րոյն շաւիղ մը՝ նաեւ այն բազմաթիւ գիտադրոյցները (séminaire), սիմպոզիումները, համագումարները՝ հայ արուեստի, հայ լեզուի, հայ ինֆուլթեան, եւլն., վերաբերեալ, որոնք բաւական յաճախակի թափով մը իրարու յաջորդեցին այս վերջին տարիներու ընթացքին: Ուրեմն, մեր խօսքը եզրափակելէ առաջ, պահ մը մասնաւորելով զայն վերջին տարիներու մեր ազգային-մշակութային կեանքին այս կարեւոր ելոյթներուն վրայ, կը փափաքէինք ուշադրութեան յանձնել անոնց այս «այժմէական» տարածքը, ժամանակակից ուղեգային մշակոյթի մը կերտումի տեսակետէն, նոյնիսկ երբ գրադին անցեալով, եւ այդ՝ բանասիրական խիստ եւ «չոր» մեքոտներու կիրարկումով:

Կը խորհիմք, թէ զուտ տեսական-գիտական հետաքրքրականութենէ մը անդին, ինչ որ կրնայ ունենալ որեւէ գիտածոյով՝ նոյնիսկ մեռած մշակոյթի մը նկատմամբ, իր այլեւայլ երեսներով հայ անցեալը պեղել ուզող յիշեալ գիտածոյները կը ներկայացնեն միեւնոյն աստիճանով աշխատանքային թեւեռ մը, այնու որ կը նպաստեն աւելի խոր եւ առարկայական ծանօթութիւն մը ստանալու այն խորը խաւին տարրերուն մասին, որոնք ժամանակակից հայ մշակոյթին վերակառուցումի եւ փոխակերպումի նախադրեալները կը բնորոշեն: Ու չենք կարծեր թէ բան մը պակսի այդ գիտածոյներուն վիճակող այս «ազգային-այժմէական» տարածքէն, մանաւանդ թէ դերէն, եթէ օտար գիտնականներ մասնակցին անոնց զուտ տեսագիտական մտաեզոքութիւններով, որ կրնան չզուգադիպիլ հայ մարդուն ազգային-այժմէական հոգեբան հետ: Արդարեւ, օտարներու գգաջական «հետաւորութիւնը», երբ կը մնայ առարկայական որոնումի մը սահմաններուն մէջ, կրնայ նպաստել որոշ չափով՝ տուեալներու եւ հարցերու աւելի յստակ դիմագերծումի մը:

Կրնանք, ուրեմն, եզրակացնել թէ, ի՛նչ որ ալ ըլլան գոյութեանական պայմանները, որոնումի հարթակներն ու հնարքները, ապրելու եւ ստեղծագործելու կերպերը, այժմէական, ապրող եւ վերապրելու երաշխիք ընձեռող ազգային մշակոյթի մը կազմաւորումը չի կրնար ըլլալ՝ միակողմանի ու տարամերժ դիրքորոշումներու արդիւնք, երեւութապէս պարզ, ներքապէս միատարր յառաջընթացք մը. այլ պէ՛տք է ներփակել բազմապիսի գործօններու միահամուռ նպաստը, թէ՛ ժամանակի եւ թէ՛ միջոցի տարածքներուն երկայնքով, որոնց բարդ համագումարումներուն ընդմէջէն, Պատմութեան եւ ի՛ր սեփական պատմութեան գիտակից հայ մարդը պիտի կերտէ իր ժամանակին հայ մշակոյթը հիմէն դէպի նորը փոխակերպումով, ձգտելով դառնալ ի՛նքն գիտակից ղեկավարը այն տրամադրական՝ որով աւանդը կ'ըլլայ յղացք եւ յղացք՝ ժողովուրդի մը հոգին:

Հ. Լ. Զ.